

Ильин

Киевскій Университетъ

82.0  
2-48

1935

ԶԱՐԼԶ ԴԻԿԿԵՐՆԱ

- 6 NOV 2011

# ԲԱՍՏԻԼԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ



820:  
Դ-48

071747-61

325

7 - 48

ԶԱՐԼԶ ԴԻԿԿԵՆԸ


Հայաստան  
1949 թ.

# ԲԱՍԻԼԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

ՀԱՏՎԱԾ «ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՅԵՐԿՈՒ  
ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ» ԳՐԱՒՑ

Թարգմանեց ԶԱՎԱԽԵՑԻ

Նկարները և Շաբաթակովի



071747-51

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ — 1935

Պատ. Խմբագիր՝ Ա. Հայրյան  
 Լեզ. Խմբագիր Հ. Պետրոսյան  
 Տեխ. Խմբագիր՝ Հ. Տեր-Դավթյան  
 Սրբագրիչ Մ. Գևորգյան

Գլուխին 258  
 Հրատ. № 3458  
 Տիրած 4000



Ձ 28486-60

Հանձնված երբ. 22/Խ 1935 թ. Ստորագրված ե տպելու 1/XI 1935 թ.

Սվ. Ա5 — 148 × 210. Պատվեր 5047  
 Տիպոգրիա նմ. Ստան 1902 թ. ԱԿԿՊ Ռոտ նա-Դոն.

Յես, Ալեքսանդր Մանեսս, մի դժբախտ բժիշկ. ծննդյամբ  
 Բովե քաղաքից, հետագայում փոխադրված Փարիզ, զրում  
 եմ այս տիտուր տողերը մռայլ խցումս, Բաստիլի պա-  
 տերի մեջ՝ 1767 թվի դեկտեմբերին: Գրում եմ գաղտնի  
 ու ընդհատումներով, ամենածանր պայմաններում: Գրվածքս  
 թաքցնում եմ յես վառարանի պատի մեջ, ուր աստիճանա-  
 բար ու մեծ ջանքով թաքստառեղ եմ պատրաստել նրա  
 համար: Ո՞վ գիտե, թերես մեկի կարեկից ձեռքը գտնի այս  
 գրվածքն այնտեղ, յերբ յես իմ վշտերի հետ փոշիացած  
 կլինեմ արդեն:

Դժվարությամբ եմ խզմզում այս բառերը ժանգոտ մեխի  
 ծայրով, թաթախելով այն ածխի փոշու և վառարանի մրի  
 մեջ՝ իմ արյունով շաղախված: Գրում եմ բանտարկությանս  
 տասերորդ տարվա վերջին ամսին:

Հույսս չքացել ե իսպառ: Յես արդեն նկատում եմ  
 սոսկալի նշաններ իմ մեջ ու գիտեմ, վոր բանականու-  
 թյունս յերկար չի մնա անգտնագ: Բայց հանդիսավոր կեր-  
 պով հայտարարում եմ, վոր այս ըռալեյիս յես միանգամայն  
 տիրապետում եմ իմ մտքերին, հիշողությունս տեղն ե ու  
 թարմ և զրում եմ զուտ ճշմարտությունը:

Մի ամպամած, բայց լուսնկա գիշեր, 1757 թվի դեկ-  
 տեմբերի յերկրորդ կեսին (կարծեմ 22-ին) յես դուքս յեկա  
 թարմ ոդ ծծելու: Իմ բնակարանը Բժշկական դպրոցի  
 փողոցումն եր: Դանդաղ ու մտախոհ գնում եյի յես Սե-  
 նայի ամայի գետավնյա փողոցով, յերբ հանկարծ լսեցի  
 յետերից ալացող մի կառքի դղրդոց: Կառքի տակ ընկնե-  
 լուց վախենալով՝ մի կողմ քաշվեցի: Բայց հենց այդ միջո-

ցին կառքի պատուհանից յերևաց մի զլուխ ու մի բարձլու ձայն հրամայեց կառապանին կանգնել:

Կառքը դանդաղեցրեց իր ընթացքը՝ ճենց վոր կառապանը կարողացավ պահել ձիերին, ու նույն ձայնը կանչեց ինձ՝ անունս տալով։ Յես անմիջապես պատասխանեցի։ Մինչ այդ՝ կառքն արդեն կարողացել եր այնքան առաջ սլանալ, վոր մինչեւ յես կհասնելի, նրա մեջ նստած յերկու տղամարդիկ, կառքի դռնակը բանալով, դուրս յեկան ճանապարհի վրա։ Յես նկատեցի, վոր յերկուսն ել փաթաթվել եյին պատմուճանների մեջ ու կարծես թաքցնում եյին դեմքերը։ Մինչեւ նրանք կողք-կողքի կանգնած եյին կառքի դռնակի մոտ, յես նկատեցի նույնպես, վոր յերկուսն ել կարծես իմ տարիքիս են, կամ մի փոքր ավելի յերիտասարդ ու չափազանց իրար նման իրենց հասակով, կազմվածքով, ձայնով, և վորքան կարողացա յես դատել, նաև իրենց դեմքով։

— Դժուք եք բժիշկ Մանետը, — հարցրեց նրանից մեկը.

— Այն։

— Բժիշկ Մանետը, ծննդյամբ Բովեյից, — ասաց մյուսը, — յերիտասարդ բժիշկ, սկզբում հմուտ վիրաբուժ, իսկ վերջին յերկու տարում հռչակ հանած Փարիզում։

— Այն, — պատասխանեցի յես, — յես այն բժիշկ Մանետն են, վորի մասին դուք խօսում եք այդպես գովասանքով։

— Մենք յեղանք ձեր բնակարանում, — ասաց առաջնը, — բայց դժբախտաբար ձեզ այնտեղ չգտանք, Իմանալով, վոր դուք գնացել եք զբունելու, հավանորեն այս կողմերը, մենք յեկանք, հույս ունենալով, վոր ձեզ կհասնենք։ Զեյթ բարեհածի կառք նստել։

Յերկուսն ել աչքի եյին ընկնում իրենց հրամայական ձերով և, ասելով այդ, կանգնեցին այնպես, վոր յես մասի կառքի դռնակի ու նրանց միջև նրանք զինված եյին, յես — վո՞չ։

— Ներեցնք — առարկեցի յես, — բայց յես սովորաբար



հարցնում եմ, թէ ով և պատիվ անում ինձ, դիմելով իմ ոգնության և ինչ կարիքի համար են հրավիրում։

Այս հարցին պատասխանեց յերկրորդ խոսողը։

— Բժիշկ, ձեզ հրավիրում են դիրքի տեր մարդիկ։ Ինչ վերաբերում է դիպածին, ձեր հմտությունն ասում ե մեզ, վոր ինքներդ ավելի լավ կապրոք ձեզ այդ դիպածը, քան մենք կարող եյնք նկարագրել այն։ Բավական ե։ Զեյթը հաճի կառք մտնել։

Ինձ մնում եր միայն հպատակվել, ու յես լուռ մտա կառք։ Նրանք յերկումն ել հետեւցին ինձ, միայն վերջինը նախ կառքի վոտնատեղը ներս զցեց, ապա ինքը թռափ։ Կառքը հետ դարձավ ու սրբնթաց թռափ հակառակ ուղղությամբ։

Յես մեր խոսակցությունը բերի այստեղ ամենայն ճշտությամբ։ Յերբեք չեմ կասկածում, վոր մեր խոսակցությունը տեղի ունեցավ հենց այդպես, բառ առ բառ։ Յես նկարագրում եմ բոլորն այնպես, ինչպես յեղել ե, լարելով միտքս, վորպեսպի չշեղվեմ նպատակից։

Կառքն իր յետել թողեց փողոցները, անցավ ուղեփակը և սլանում եր դաշտային ճանապարհով։

Ուղեփակից տաս կիլոմետրի վրա, — հեռավորությունը յես հետո հաշվեցի, յերբ նորից անցնում եյի այդ ճանապարհով, — կառքը ծովեց գլխավոր ճանապարհից ու կանգնեց մեկուսացած մի տան առաջ։

Մենք յերեքս ել գուրս յեկանք կառքից ու խոնավք փափուկ կածանող, այգու միջով, ուր մոռացության մատնաված շատրվանը թափվում եր ափերից, ուղղվեցինք դեպի այդ տունը։

Զրնգաց զանգակը, բայց իսկույն չբացին ներս ից, ու մեկն իմ առաջնորդներից, ծանը ճամբորդական ձեռնոցով, թափով խփեց գուռը բացող ծառայի յերեսին։

Այդ վարմունքի մեջ վոշինչ չկար արտասովոր ինձ համար, վորովհետեւ յես հաճախ եյի տեսել, թե ինչպես աղաներն ստորին դասի մարդկանց ծեծում են ավելի անամոթաբար ու անխիղճ քան շներին։ Բայց բանն այն եր

վոր մյուսն ել բարկանալով՝ ծառայի դեմքին խփեց ձեռքով։ Այստեղ արդեն յերկուսի նմանությունն ապշեցուցիչ եր և յես իսկույն հասկացա, վոր նրանք հարազատ յեղբայրներ են ու յերկլորյակներ։

Այն բոպեյից, յերբ մենք կանգնեցինք գրսի պարսպի դռանը, վոր գուակ եր (յեղբայրներից մեկը բացեց ու նորից փակեց, յերբ մենք ներս մտանք), յես ինչ-վոր ձիչ լսեցի վերին հարկի մի սենյակից։ Ինձ իսկույն տարան այդ սենյակը, ու քանի բարձրանում եյինք սանդուխքներով, այնքան պարզ եր լսվում ձիչը։ Հիվանդը գալարվում եր անկողնում խիստ զառանցանքի մեջ։

Պացիենտա արտասովոր գեղեցկությամբ մի յերիտասարդ կին եր, քսան տարեկանից թերևս մի փոքր ավելի։ Նրա մազերը գղղղված եյին՝ տեղ-տեղ պոկոտված, իսկ ձեռքերը կապված կողքերին՝ գոտիներով ու թաշկինակներով։ Յես նկատեցի, վոր այդ կապանքները տղամարդու գործածության առարկաներ են։ Դրանցից մեկի՝ փնջափոր շքեղ շարֆի վրա յես տեսա կարած ազնվական տոհմանիշն ու «Ե» տառը։

Յես նկատեցի այդ հենց առաջին ըոպեյին, յերբ քննում եյի պացիենտիս, վորովհետեւ թափալվելով անկողնում՝ նա սողաց անկողնի ափին ու շարֆն առավ բերանը՝ խեղդվելու ոիսկ անելով։ Իմ առաջին գործը յեղավ շարֆը բերնից հանել ու թեթևացնել նրա շնչառությունը։ Ահա հենց այդ միջոցին աչքիս ընկավ ասեղնագործ տառը շարֆի անկյուններից մեկում։

Յես զգուշությամբ դարձրի հիվանդին մեջքի վրա, ձեռքերը դրի կրծքին, վորպեսպի հանգստացնեմ նրան ու պահեմ անկողնում, և նայում եյի դեմքին։ Նրա լայնացած աչքերը մոլեգնորեն դեգերում եյին այս ու այն կողմ, և հաճախ զիլ ու ականջ ծակող ձայնով ձչում եր նա, միշտ կրկնելով նույն բառերը՝ « իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս», հետո բարձր ճամբում եր մինչև տասներկուսն ու շշուկով արտասանում «սուսսու»։ Մի վայրկյան, վոչ



ավելի, նա սսկվում եր, ձայնը կտրում, կարծես ականջ եր  
դնում և ապա նորից զիլ ճշում, քրթմնջում «Իմ ամու-  
սինը, իմ հայրը, յեղբայրս», համրում մինչև տասներկուս  
ու նորից շշնջում «սուսսո»: Բառերն ու հեծկլտանքը  
կրկնվում եյլն առանց մազաչափ փոփոխության ու ճի-  
չերը չեյին դադարում, բացի մի վայրկյան ընդմիջումից:  
— Վաղուց ե, վոր այսպես շարունակվում ե, — հար-  
ցրի յետ

Յեղբայրներին միմիանցից ջոկելու համար յես կանվա-  
նեմ նրանց մեծ ու փոքր: Մեծը, վոր ավելի իշխանական  
եր, պատասխանեց ինձ.

— Յերեկ յերեկոյանից, գրեթե մի որ եւ  
— Իսկապես ունի՞ նա ամուսին, հայր, յեղբայր:  
— Յեղբայր ունի՞  
— Նրա յեղբոր հետ չի արդյոք, վոր յես խոսում եմ:  
Նա պատասխանեց գերագույն արհամարհանքով.  
— Վո՞չ:

— Մոր ժամանակներս արդյոք տեղի չի ունեցել վո-  
րեւ դեպք, վոր նրա մաքում կապակցվեր տասներկու  
թվանշանի հետ:

Անհամբեր միջամտեց կրտսեր յեղբայրը.  
— Ժամի տասներկուսը:

— Տեսնո՞ւմ եք, պարոններ, — ասացի յես՝ շարունա-  
կելով հիվանդի ձեռքերը պահել կը թըխն, — վորքան յես  
անոգուտ եմ իմ այն դրությամբ, վորով դուք բերիք ինձ  
այստեղ: Յեթե յես առաջուց գիտենայի, թե ինչ եմ տես-  
նելու այստեղ, հետո դեղեր կվերցնեյի: Իսկ այժմ մենք  
ահազին ժամանակ ենք կորցնում: Այսպիսի մեկուսացած  
վալրում վո՞չ մի դեղ չես ճարի:

Մեծ յեղբայրը նայեց փոքրին, վորը հպարտությամբ  
վրա բերեց: «Այստեղ կա մի արկղ դեղերով», հանեց պա-  
հարանից ու դրեց սեղանին:

Յես բաց արի մի քանի սրվակ, հոտոտեցի, խցանները  
դրի տթունքիս: Այդ բոլորը քնարեր դեղորայք եյին, ինքն

ըստ ինքյան թունավոր։ Բայց ուրիշ միջոց չկար ձեռքի տակ։

— Դուք կասկածում եք դրանց վերաբերմամբ, — հարցրեց կրտսերը։

— Դուք տեսնում եք, պարհն, վոր յես մտաղիր եմ ոգտվելու դրանցից, — պատասխանեցի յես և այլս վոչինչ շասացի։

Մեծ գժվարությամբ ու յերկար ջանքերից հետո յես վերջապես հարկադրեցի հիվանդին կուլ տալ դեղը՝ ինչ չափով պետք եր։ Վորովհետեւ վորոշ ժամանակից հետո յես մտադիր եյի կրկնել դեղը, բացի այդ՝ պետք եր դիտել դեղի ներգործությունը, յես նստեցի անկողնի մոտ։ Մենակում ծառայում եր յերկոտ, ընկճած տհաքով մի կին, այն ծառայի կինը, վոր բացեց մեզ դուռը։ Նա աննկատելի կերպով քաշվեց մի անկյուն։ Տունը խոնավ եր, հին, խըղճուկ կահավորված, — յերեւում եր, վոր նոր ելին բռնել ու ժամանակավոր։ Պատուհաններից կախված եյին ծանր, հին վարագույրներ, — ըստ յերեւութին նոր եյին խփել մեխերով, վոր ճիշերը ջլսվեն։ Իսկ այդ ճիշերը շարունակվում եյին միշտ նույն հետևողականությամբ ու նույն կանչերով՝ «Իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս», ու դարձյալ համբանք մեկից մինչև տասներկում ու «սուսաս»։

Անմիտ զառանցանքն այնքան կատաղի յեր, վոր յես չքանդեցի հիվանդի ձեռքերին փաթաթած կապերը։ Յես միայն հետևում եյի, վոր նրանք ցավ չպատճառեն նրան։

Ինձ համար միակ միջթարանքն այն եր, վոր հիվանդի կրծքին դրած ձեռքս մեղմացնող ներգործություն եր անում. բովե առ բովե հիվանդի դեմքը հանգստանում եր։ Բայց ճիշերը շարունակվում եյին ճոճանակի ճշտությամբ։

Քանի վոր ձեռքս շատ թե քիչ հանգստացնում եր հիվանդին (ինձ թվում եր), յես լուռ նստած եյի անկողնի մոտ, իսկ յերկու յեղբայրները նայում եյին ինձ։

Հանկարծ մեծն ասաց։

— Մէ ուրիշ պացիենտ ել կա։

Յես ցնցվեցի ու հարցրի։

— Գուցե շտապ ոգնություն ե հարկավոր։

— Ավելի լավ ե՝ ինքներդ նայեցեք, — պատասխանեց նա անտարբեր կերպով ու վերցրեց մոմը։

\* \* \*

Մենք անցանք հետին սանդուխքով։ Մյուս պացիենտը պառկած եր գոմի կարին շինված ձեղնահարկի նման մի սենյակում։ Այդ սենյակի մի կողմը ցածլիկ, ծեփած առաստաղով եր, իսկ մյուս կողմը՝ բոլորովին բաց։ Յերեվում եյին կտուրի կղմինդրներն ու լայնքի գերանները։ Հատակին թափված եր խոտի ու հարդի պաշար, ծառածղների խրձեր վառելիքի համար ու մի կույտ խնձորավազի մեջ։ Յես պիտի անցնեյի այդ բոլորի մոտով։ Իմ հիշողությունս պարզ ե ու անսխալ ՚իհտմամբ փորձում եմ այն, վերհիշելով այս բոլոր մանր-մունը բաները, ու նորից տեսնում եմ այդ ամենն իմ խցում՝ Բաստիլի պատերի մեջ բանտարկությանս տասերորդ տարվա վերջին, ճիշտ այնպես, ինչպես տեսա այն գիշերը։

Հատակին, մի խուրձ խոտի վրա, բարձը գլխի տակ կոխած՝ պառկած եր մի գեղեցիկ գեղջուկ պատանի, տասնյոթ տարեկանից վոչ մեծ։ Նա պառկած եր մեջքի վրա, ատամները բաց, աջ ձեռքի սեղմկած բուռնցը բունած կրծքին ու վառվուն աչքերը հառած վեր... Յես չկարողացանայել, թե վնրտեղ ե նրա վերքը, յերբ մի ծնկիս չոքած՝ կուացանրա վրա վրա. բայց հասկացա, վոր նա մեռնում ե սուր գենքով ստացած վերքից։

— Յես բժիշկ եմ, իմ խեղճ բարեկամ, թող նայեմ վերքու։

— Նայելու կարիք չկա, — պատասխանեց նա — թող վերքը նրա ձեռքի տակն եր, ու յես համոզում եմ, վոր ձեռքը վերցնի կրծքից։ Նա խոցված եր սրով, հավանորեն քսան — քսան չորս ժամ առաջ։ Սակայն վնչ մի բժշկական հմտություն չեր կարող փրկել նրան, յեթե

Նույնիսկ ոգնությունն անմիջապես հասցնելին։ Նա արագ մոտենում եր մահվան։ Յես դարձա գեղի մեծ յեղայրն ու տեսա, վոր նա այդ սքանչելի պատահու վրա, վորի կյանքը մարում եր, նայում ե այնպես, կարծես այդ մի վիրավոր թռչուն՝ նապաստակ կամ ճագար լիներ և վոչ իրեն յեղայրակից — մարդ։

— Ի՞նչպես ե պատահել այս, պարզն։

— Կատաղած լակոտը... Ճորտ ե։ Հարկադրել ե յեղբորս պաշտպանվել ու ընկել ե նրա սրից.. ասես ազնվական լինի։

Այդ պատասխանի մեջ չկար ստվերն անգամ խղճահարության, տիրության կամ մարդկային կարեկցության Խոսողը կարծես հասկացնել եր տալիս, թե՝ անվայել ե համարում, վոր այդ խորթ ցեղի եյակը մեռնում ե այդտեղ ու չի սատկում վորեն սովորական շան մութ բնում, եր ճիճուտ ցեղի շրջանում։

Նա միանգամայն անընդունակ եր խղճալու այդ մանկանը կամ ցավելու նրա վիճակի համար։

Մինչեռ նա խոսում եր, պատանու աշքերը դանդաղորեն դարձան նրա վրա, հետո նույն դանդաղությամբ նա դարձրեց ինձ վրա։

— Բժիշկ, զրանք սոսկալի գոռոզներ են, այդ ազնվականները, բայց մենք՝ հասարակ շներս նույնպես յերբեմն հպարտ ենք լինում։ Դրանք մեզ կողոպտում են, վիրավորում, ծեծում, սպանում, բայց այնուամենայնիվ մեզ մոտ մնում ե մի փոքր հպարտություն։ Նա... Դուք նրան տեսամբ, բժիշկ։

Հիվանդ կնոջ ճիչերն այստեղից անգամ լսվում եյին, թեև հեռավորությունը մեղմացնում եր նրա ձայնը։ Պատանին լսում եր այդ ճիչերն այնպես, կարծես կինը պառկած եր հենց այդտեղ։

Յես պասասխանեցի։

— Այս, յես տեսա նրան։

— Նա իմ քույրն ե, բժիշկ։ Շատ տարիներ այդ ազնվա-

կանոներն ոգտվեցին իրենց սողկալի իրավունքով։ Նրանք դժբախտացրին, փչացը մեր ամաչկոտ քույրերին, նրանք պատվագուրկ արին նրանց։

Այսումենայնիվ մենք ունեյինք լավ աղջիկներ։ Յես գիտեմ այդ, իմ հայրն ել ասել ե ինձ այդ։ Նա լավ աղջիկ ե։ Նա նշանված եր մի լավ տղի հետ, վոր նույնպես դրանց ճորտերից եր։ Մենք բոլոր գյուղացիներս մի կալվածատիրոջ ենք պատկանում... այ, դրան, վոր կանգնած ե այստեղ։ Իսկ այն մյուսը՝ դրա յեղայրն ե... վատթարագույնը դրանց չար տոհմից։

Պատանին խօսում եր մեծ ճիգթափելով, հավաքելով վերջին ուժերը, բայց նրա հոգու արիությունը յերևան եր գալիս սոսկալի թափով։

— Այդ մարդը, վոր կանգնած ե այստեղ, կողոպտել ե մեզ։ Այդ բարձր անձնավորությունները միշտ կողոպտում են մեզ, հասարակ շներին։ Նա անխիղճ կերպով ծանրաբեռնել ե մեզ հողային տուրքերով, ստիպում եր ձրի աշխատել իր համար, հրամայում եր մեր հացն իր ջրաղացում աղալ, հրամայում եր իր տնային թռչունները մեր հյուծված արտերում արածացնել, իսկ մեզ, մահվան յերկյուղի տակ, արգելում ե պահել անգամ մի թռչուն։ Նա կողոպտել ե, թալանել ու վախեցրել մեզ այնպես, վոր յերբ հաջողվում եր մեզ ձեռք բերել մի կտոր միս, մենք ուտում եյինք այն մեծ յերկյուղով, դուռապատուհան փակ, վորպեսզի դրա մարդիկ չտեսնեն ու ձեռքներից չխլեն այդ կտորը։ Յեշ նա այնպես վախեցրել ե մեզ, այնպես թալանել, ու մենք այնպես աղբատացել ենք, վոր մեր հայրը հաճախ ասում եր. «Սոսկալի բան ե այժմ յերեխաներ ունենալը։ Ավելի լավ ե՝ մեր կանայք թող չըեր լինեն, ու մեր դժբախտ տոհմը թող անհետ վերջանա»։

Յես յերբեք չեյի տեսել, վոր վիրավորանքի զգացմունքն այդպիսի հրաբորքով ուժով դուրս պոռթկա։ Յես առաջ ել յենթաղբում եյի, վոր այդ զգացմունքը թաքնված ե ժողովրդի մեջ, բայց առաջ վոչ մի տեղ նա չեր արտահայտվել

այդպիսի հանկարծակի պոռթկումով, ինչպես այս մեռնող պատանու մեջ:

— Այսուամենայնիվ, բժիշկ, քույրս ամուսնացավ: Ամուսինը հիվանդացավ, խեղճը, հենց ալդ ժամանակ, ու քույրս պահպանում եր նրան, խնամում մեր տնակում, մեր շան բնում, ինչպես կասեր անշուշտ այդ մարդը: Յեվ ընդամենը մի քանի շաբաթ եր անցել հարսանիքից, յերբ այդ մարդու յեղբայրը մի անգամ տեսավ քրոջս ու քույրս այնքան դուր յեկավ նրան, վոր նա սկսեց խնդրել յեղբորը, քրոջս իրեն տալու... վորովհետև արժե՞ր միթե ուշադրություն դարձնել ամուսնու վրա... Այդ ազնվականը համաձայն եր, բայց իմ քույրը, վոր մի լավ, համեստ կին ե, ատում եր զրա յեղբորն այնքան խիստ, վորքան և յետ: Յեվ ի՞նչ արին այդ յերկուսը, վորպեսդի սարսափեցնեն նրա ամուսնուն, վոր նա ի՞նքը համոզի քրոջս...

Պատանու աչքերը, վոր շարունակ սեեռած ելին ինձ վրա, գանդաղորեն դարձան այդ ժամանակ դեպի հանդիսատեսը, ու յերկուսի դեմքիցն ել յես տեսա, վոր ասածն ամբողջապես ճշմարիտ ե: Մինչեւսկ այժմ Բաստիլում յես տեսնում եմ այդ յերկու իրար դիտող հպարտությունները, ազնվականի աչքերում փայլում եր արհամարհական անտարբերություն, զյուղացու աչքերում բոցավառվում եր վոտնահարված զգացմունքների փոթորիկն ու վրեժինդրության անզուսպ ծարավը:

— Դուք դիտեք, բժիշկ, վոր այս ազնվականներն իրավունք ունեն մեզ, հասարակ շներիս, լծելու սայլին ու իրանք մեջը նստելու: Յեվ նրանք լծում ելին նրան սայլին ու իրանք մեջը նստած՝ քշում: Դուք դիտեք, վոր դրանք իրավունք ունեն մեզ քշելու դաշտ, վոր ամբողջ դիշերը լուցնենք գորտերին ու պաշտպանենք նրանց թանկազին քունը խանգարելուց: Յեվ դրանք դիշերով քշում ելին նրան սպանիչ խոնավության մեջ, իսկ յերեկը նորից լծում սայլին: Բայց նա անձնատուր չեղավ: Վհչ: Մի անգամ կեսորին նրան արձակեցին լծից ու բաց թողին, վոր

ուտի... յեթե ուտելու բան գտնի իհարկե... իսկ նա հեծկլտաց տասներկու անգամ, ամեն հարվածին մի անգամ, մինչև խփում եր ժամացույցը, ու մեռավ քրոջս կրծքի վրա:

Գերմարդկային ճիգերով պահպանվում եր կյանքն այդ պատանու մեջ, այնքան բուռն եր նրա մեջ կրած վիրավորանքներն արտահայտելու ցանկությունը: Նա ուժով վանում եր խտացող մահվան խավարը ու նույն որհասական ուժով սեղմում եր աջ բռունցքը, ծածկելով վերը:

— Այն ժամանակ, ահա այս յեղբոր թույլտվությամբ, մինչև իսկ նրա ոգնությամբ, այն մյուսը տարավ քրոջս իր մոտ: Այս, չնայելով, վոր քույրս հակառակ եր, դիմադրում եր, — դուք դիտեք այդ, բժիշկ, կամ շուտով կիմանք, — այն յեղբայրը տարավ քրոջս իր մոտ սոսկ ժամանցի; զվարճության համար, կարճ ժամանակով Յես տեսա՝ ինչպես ելին տանում նրան ճանապարհով, յերբ անց կացը ըին իմ մոտից: Յերբ յես դուն դարձա, հորս սիրտը պայթեց: Նա բնավ մի խոսք անգամ չեր արտասանել, և այդ չարտասանված խոսքերը լցրել ելին նրա սիրտը լեփ-լեցուն: Այն ժամանակ յես վերցրի փոքր քրոջս (յես ունեմ մեկն ել) ու թագցրի այնպես, վոր դա այլևս չի կարող ձեռք բերել նրան... կամ համեստ դեպս չի լինի զրադերին... Հետո յես հետապնդեցի զրա յեղբորը մինչև այս տունն ու յերեկ յերեկոյան մտա այստեղ... այս, հասարակ շունը, բայց սուրը ձեռքին... Ուր ե այս ձեղնահարկի պատուհանը...

Նրա աչքերը մթնում ելին հետզհետե ու շրջահայացը նեղանում: Յես շուրջս նայեցի ու նկատեցի, վոր խոտն ու հարզը ցիր ու ցան եր յեղած հատակին ու կոխկրտված, կարծես կոիվ եր տեղի ունեցել այդտեղ:

— Քույրս լսել եր իմ ձայնը, և նա յեկավ: Յես ասացի նրան, վոր մոտ չգա, մինչև կսպանեմ նրա առեանգողին: Ներս մտավ նա, քրոջս դահիճը, սկզբում մի քանի մասեթ շպրտեց ինձ ու հետո խփեց մտրակով: Բայց յես, թեև

հասարակ շուն, հարձակվեցի նրա վրա ու հարկադրեցի  
մերկացնել սուրբ:

Քանի կտոր ել արել ե նա իր սուրն այժմ, այնուամենայ-  
նիվ ներկված ե այն իմ հասարակուամկական արյունով:  
Նա հարկադրված եր մերկացնել այն ու պաշտպանվել...  
Ու կովեց նա ինձ հետ իր բոլոր հմտությամբ՝ փրկելով  
իր կյանքը...

Մի քանի բոպե դրանից առաջ իմ աչքիս ընկան սրի կը-  
տորտանքը, վորոնք թափված եյին խոտերի մեջ: Այդ սուրը  
ազնվականի սուր եր: Մյուս անկյունում ընկած եր մի հին  
սուր, վոր նման եր զինվորի սրի:

— Այժմ բարձրացրեք ինձ, բժիշկ, մի փոքր բարձրացրեք...  
Ուր ե նա:

— Նա այստեղ չե, — պատասխանեցի յես, բոնելով  
պատանուն ու կարծելով, թե հարցնում ե մյուս յեղբոր  
մասին:

— Նա: Գոռող՝ ինչպես բոլոր ազնվականները, նա  
վախենում ե նայել ինձ վրա: Ուր ե այն մարդը, վոր  
այստեղ եր: Դարձրեք յերեսս նրա կողմը:

Յես պատանու գլուխը բարձրացրի ու դրի ծնկիս:  
Բայց, մի բոպե ընդգրկված արտասավոր ուժով, նա կանգ-  
նեց իր վողջ հասակով: Այն ժամանակ յես ել վեր՝ կացա՛  
աշխատելով պահել նրան:

— Մարկիզ, — ասաց պատանին, աչքերը լայն հառելով  
նրա վրա ու բարձրացնելով աջ ձեռքը, — այն որերին,  
յերբ կգա հատուցումը ձեր բոլոր արարքների, պատա-  
խանի յեմ կանչում ձեզ ու ձեր վողջ կատաղի սերունդը,  
մինչև վերջին շառավիղը: Նշում եմ ձեզ արյունի խաչով,  
ինչան այն բանի, վոր այդ կլինի: Այն որերին, յերբ այս  
բոլոր գործերի համար կգա հատուցումը, յես կանչում եմ  
ձեր յեղբորը — վատթարագույնին ձեր վողջ չար սերնդի,  
վորպեսզի նա պատասխան տա առանձին: Յես նշում եմ  
նրան այս արյունի խաչով, ի նշան այն բանի, վոր այդ  
կլինի:

28486-60



Նա յերկու անգամ ձեռքը դրեց իր վերքին ու ցուցամատով խաչ քաշեց ողի մեջ, կանգնեց դարձյալ մի յերկու վայրից՝ ձեռքը բարձրացրած... և ապա ձեռքը թուլացավ, կախվեց, նա ինքն ել թուլացավ, ու յես պառկեցրի նրան՝ մեռած:

\* \* \*

Յերբ վերադարձա յերիտասարդ կնոջ անկողնի մոտ, նա զառանցում եր դարձյալ ու ճշում, Յես գիտեյի, վոր դեռ յերկար ժամեր կարող ե տեել այդ և հավանորեն կվերջանա գերեզմանի լուլթյան մեջ:

Յես կրկնեցի նախկին դեղի դողան ու նստեցի նրա անկողնու մոտ մինչև ուշ գիշեր: Ճշում եր հիվանդն առաջվան պես բարձր ու զիլ, իսկ բացականչություններն արտասանում նույն պարզությամբ ու նույն կարգով.

— Իմ ամուսինը, իմ հայրը, յեղբայրս: Մեկը յերկու, յերեր, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը, տասը, տասնմեկը, տասներկու... Սնւաս...

Այդ շարունակվեց քսանվեց ժամ անընդհատ՝ այն ըռպեյից, յերբ յես առաջին անգամ տեսա նրան: Այդ ժամանակամիջոցին յես յերկու անգամ յեկա ու գնացի ու նորից նստեցի նրա անկողնի մոտ, յերբ նկատեցի, վոր նրա լեզուն սկսում ե ծանրանալ: Յես արի այն նվազագույնը, ինչ կարելի յեր անել նրա ցավը մեղմելու համար, ու կամաց կամաց նա ընկավ լետարգիայի մեջ ու պառկած եր մեռելի պես:

Այդ նման եր այն յերկութին, յերբ յերկար ու սոսկալի փոթորկից հետո քամին հանդարտվում ե ու անձրւը դադարում: Յես արձակեցի նրա ձեռքերն ու կանչեցի աղախնուն՝ ինձ ոգնելու, վոր պառկեցնենք հիվանդին ու փոխենք վրայի պատառութված շորերը:

Այդ ժամանակ յես նկատեցի հղիության առաջին նշաններն ու կորցը նրա կյանքը փրկելու իմ մեջ մնացած վերջին փոքրիկ հույսը:

— Ի՞նչ ե, մեռածվ, — հարցրեց մարկիզը, վորին առաջվան պես պիտի անվանեմ մեծ յեղբայր: Նա ներս մտավ յերկարածիտ կոշիկներով, ձիուց նոր իջած:

— Դեռ վնչ, բայց ըստ յերկութին մեռնում ե, — պատասխանեցի յես:

— Ինչքան ուժ կա այս հասարակ, ուամիկ մարդկանց մեջ, — ասաց նա՝ նայելով հիվանդին վորոշ հետաքրքրությամբ:

— Զարմանալի ուժ են տալիս վիշտն ու հուսահատությունը, — նկատեցի յես:

Նա սկզբում ծիծաղեց իմ խոսքերի վրա, հետո հոնքերը կիտեց: Աթոռը վոտքով հրելով, վոր մոտեցնի իմ աթոռին, նա հրամայեց աղախնուն հեռանալ, նստեց ինձ մոտ և ասաց կիսաձայն:

— Բժիշկ, տեսնելով յեղբօրս դժվար կացությունն այս ուամիկ ճորտերի հետ, յես նրան խորհուրդ տվի դիմել ձեր հմտությանը: Դուք բավական մեծ հոչակ ունեք և ինչպես յերիտասարդ մարդ, վոր կամենում ե իր համար հաջող ասպարեզ ստեղծել, հավանորեն կկարողանաք հոգալ և ձեր շահերի մասին: Այն ամենը, ինչ այստեղ դուք տեսաք, կարելի յե միայն տեսնել, իսկ խոսել այդ մասին — չի կարելի:

Յես ականջ դրի հիվանդի շնչառությանն ու խույս տվի պատասխանից:

— Բարեհաճեցիք լսել, ինչ ասացի ձեզ, բժիշկ:

— Պարհն, — ասացի յես, — իմ արհեստի մեջ ընդունված ե գաղտնիք համարել այն ամենը, ինչ հաղորդումեն մեզ մեր պացիենտները:

Յես պատասխանեցի նրան զգուշությամբ, վորովհետեւ չափազանց վրդովված եյին այն ամենով, ինչ տեսել ու լսել եյի այդտեղի:

Հիվանդի շնչառությունն այնքան անհնկատելի յեր դարձել, վոր յես լարված աշխատում եյի զարկերակը գտնել ու պիրտը լսել — կյանքը դես պլառում եր, և այդքան միայն:

Նստելիս յես յետ նայեցի ու տեսա, վոր յերկու յեղ-  
քայլն ել աչքերը հառած նայում են ինձ:

\* \* \*

Յես այնպիսի ծայրահեղ դժվարությամբ եմ գրում,  
այնպես դաժան ցուրտ ե, և այնպես սարսափում եմ բոնը-  
վելուց և ստորերկրյա խուլ խավար խուցն ընկնելուց, վոր  
ստիպված եմ կրծատել պատմվածքս: Հիշողությունս մազա-  
չափ անգամ չի թուլացել կամ մթափներ նա կարող ե  
վերականգնել ամեն մի մանր-մունք բան, ամեն մի խոսք,  
վոր արտասանվել ե իմ և այն յերկու յեղբայրների  
միջև:

Հիվանդը տանջվեց մի շաբաթ: Վերջում յես սկսեցի  
հասկանալ վորոշ ձայներ, վոր արտասանում եր նա ական-  
ջիս, կիպ հպելով շրթունքները: Նա հարցրեց, թե վորտեղ  
ե զտնվում ինքը, և յես պատասխանեցի, հետո հարցրեց,  
թե՝ ով եմ յես, և յես ասացի իզուր աշխատեցի յսս իմա-  
նալ նրա ազգանունը: Նա մեղմ որորեց գլուխը բարձի վրա  
և թուքցրեց իր գաղտնիքը, ինչպես և պատանին:

Յես հնարավորություն չունեյի նրան հարցեր տալու,  
մինչև չասացի յեղբայներին, վոր նա արագ թուլանում ե  
ու չի ապրի մինչև մյուս որը: Մինչև այդ ժամանակ, թենի  
յեղբայրներից վոչ մեկը չերնկատում հիվանդի մեջ գիտակ-  
ցության նշաններ, ու միայն յես ու աղախինը գիտեյինք  
այդ, այնուամենայնիվ մերթ մեկը, մերթ մյուսը կասկա-  
ծելով, միշտ նստում եյին անկողնի գլխավերե վարագույրի  
յետեր, քանի յես այնտեղ եյի: Բայց, յերբ մոտեցավ վախ-  
ճանը, նրանք անհայտ կերպով անտարբեր դարձան գեպի  
այն տեղեկությունները, վոր յես կարող եյի գուրս կորզել  
հիվանդից, կարծես, — խոցեց ինձ այդ միտքը, — յես նույն-  
պես մեռնում եյի:

Յես շարունակ նկատում եյի, վոր նրանց հպարտու-  
թյունը սոսկալի կերպով խոցված ե, և տանջում ենրանց  
այն հանգամանքը, վոր փոքր յեղբայրն (ինչպես յես ան-

վանում եմ նրան) ստիպված ե յեղել իր սուրբ խաչել մի  
դյուղացու հետ, և վոր այդ գյուղացին յեղել եմի մանուկը  
Միակ մատածմունքը, վոր ակներև կերպով ու իսկապես  
տանջում եր նրանց յերկուսին ել, այն եր, վոր պատահած  
դեպքը վերին աստիճանի ստորացուցիչ եր նրանց տոհմի  
համար և վոր նրանք ընկել են ծիծաղելի դրության մեջ:  
Յերբ փոքր յեղբոր հայացքն ընկնում եր աչքիս, նրա աչ-  
քերի արտահայտությունն ստիպում եր ինձ հասկանալ,  
վոր յես խորապես ատելի յեմ նրա համար, և վոր յես ամեն  
ինչ իմացա պատանուց: Նա ավելի քաղաքավարի ու սիրա-  
լիր եր ինձ հետ, քան մեծ յեղբայրը, բայց յես հասկանում  
եյի նրան: Յեկ յես տեսնում եյի, վոր յես մտատանջու-  
թյան առարկա յեմ դարձել և մեծ յեղբոր համար:

Հիվանդը մեռավ կես գիշերից յերկու ժամ առաջ, —  
բոպե առ բոպե, իմ ժամացույցով, ճիշտ այն ժամին, յերբ  
առաջին անգամ յես տեսա նրան: Յես մենակ եյի նրա  
մոտ, յերբ նրա մատաղ, անողնական զլուխը կամացուկ  
խոնարհվեց մի կողմ, ու վերջացան նրա բոլոր յերկրային  
վշտերն ու վիրավորանքները:

Յեղբայրներն անհանքեր սպասում եյին ներքեի սեն-  
յակներից մեկում, շտապելով վորքան կարելի յե շուտ  
հեռանալ այստեղից: Յես, մենակ նստած անկողնի մոտ,  
լառում եյի՝ ինչպես նրանք այնտեղ հետ ու առաջ եյին  
քայլում, մտրակը շրպացնելով յերկարածիտ կոշիկներին:

— Վերջապես մեռավ, — հարցը մեծը, հենց վոր յես  
ներս մտա:

— Մեռավ, — պատասխանեցի յես:

— Աչք լույս, յեղբայր, — ասաց նա՝ դառնալով  
փոքրին:

Նա առաջ ել փող եր առաջարկել ինձ, բայց յես խընդ-  
րել եյի առայժմ համբերել: Այժմ նա տվեց մի ծրար  
վոսկի: Յես վերցրի, բայց զրի սեղանին: Յես նախորոք  
մտածել եյի այդ հարցի մասին ու վորոշել եյի վոչինչ  
չվերցնել:

— Խնդրում եմ ներեք ինձ, — ասացի յես, — ներկա  
պարագաներում յես չեմ կարող վարձք վերցնել:

Նրանք իրար յերես նայեցին ու խոնարհեցին գլուխներն  
ի պատասխան իմ մնաս բարեին:

Ու մենք բաժանվեցինք առանց այլես մի խոսք  
ասելու,

\* \* \*

Յես հոգնեցի, հոգնեցի... հյուծվեցի զրկանքների մեջ,  
Չեմ կարողանում նույնիսկ կարդալ այն, ինչ գրել ե իմ  
ուժասպառ ձեռքը:

Առավոտը վաղ վոսկու ծրարը փոքրիկ արկղում, կա-  
ֆարիչի վրա իմ անունը գրած, գրած եր իմ գուանը:

Յես յերկար մտածեցի, թե ինչ անեմ: Այդ որը յես  
վերջնականապես վճռեցի ազնվորեն մի նամակ գրել մինիս-  
տրին, համառոտակի բացատրելով գործի եյությունը, այ-  
սինքն, թե ինչպիսի յերկու պացիենտի մոտ են հրավիրել և  
ուր են տարել ինձ դրա համար:

Մի խոսքով — բոլոր պարագաները: Յես գիտեյի, թե  
ինչ են նշանակում պալատական կապերը և ի՞նչ չափերի  
յե համուռմ ազնվականների անպատիժ մնալն իրենց գոր-  
ծած հանցանքների համար, դրա համար ել բնավ չեյի  
սպասում, թե հրավարակ կհանվի գործը, այլ սոսկ կամե-  
նում եյի սեփական խիզճա մաքընել:

Յես վողջ գործն իրեն խոր գաղտնիք եյի պահում,  
նույնիսկ կնոջցու, և վորոշեցի այդ մասին նույնպես հիշել  
նամակում: Յես բնավ չեյի նախազգում վորեն իրական  
վտանգ ինձ համար, բայց յես գիտեյի, վոր այստեղ վտանգ  
կարող ե լինել ուրիշների համար, յեթե հայտնի դառնա  
այն, ինչ գիտեյի յես:

Այդ որը յես խիստ զբաղված եյի հիվանդներով, դրա  
համար ել չկարողացա վերջացնել նամակս: Հետեւալ առա-  
վոտ յես սովորական ժամից ել վաղ վեր կացա, վորպեսզի  
վերջացնեմ նամակս: Նոր տարվա նախորյակին եր այդ:

Նամակս ավարտած, դրած ե իմ առաջ: Յես ծրաբեցի  
այն ու վոչվորի չհավատալով, բացի ինձնից, ուղարկեցի  
նամակս անձամբ:

Յես ավելի ու ավելի յեմ թուլանում: Արդեն գրեթե  
անզոր եմ ի կատար ածելու այն խնդիրը, վոր վերցրել եմ  
ինձ վրա: Յուրա ե այստեղ, խավար, իմ զգացմունքները  
քարանում են, ու թախիծը, սև թախիծը ճմլում ե սիրտս:

Պակասում ե թուղթս: Յերեկ գրավեցին մի թերթիկս  
ու սպառնացին: Այսոր յես պիտի վերջացնեմ իմ հաշվե-  
տվությունը:

Այն յերեկոյան, նոր տարվա նախորյակին, մոտավորա-  
պես ժամի 9-ին, զուռս զանգահարեց սև պատմուճանով մի  
մարդ, ասելով, վոր կամենում ե ինձ տեսնել, կամաց  
հետեւեց ծառայիս, մի յերիտասարդ տղի, վորին կանչում  
ելին երնստ Դեֆարժ: Յերբ ծառան ներս մտավ սենյակ,  
ուր նստած ելի յես կնոջս հետ, — ո, իմ թանկազին կին,  
իմ սքանչելի ու շահել կին, — մենք տեսանք այդ մարդուն  
անխոս կանգնած խորքում, մինչեռ մենք յենթագրում  
ելինք, թե սպասելիս կինի դռան մոտ:

Նա ասաց, վոր մի անհետաձգելի դիպվածի առթիվ,  
ինձ խնդրում են գնալ Սենտ-Ռուրե փողոցը: Յեվ չեն  
ուշացնի, վորովինետև ներքեռում կառքն ինձ ե սպասում:


Կառքն ինձ տարավ, նա ինձ բերեց իմ գերեզմանը:

Հենց վոր տնից մենք հեռացանք, ինչ վոր մեկը պինդ  
կապեց բերանս ու ձեռքերս վոլորեց յետես: Յերկու յեղ-  
բայրները գեմ դուրս յեկան մութ անկյունից: Մարկիզն  
հանեց գրպանից իմ գրած նամակը, ցույց տվեց ինձ, այբեց  
լապտերի նրան մեկնած մոմի վրա ու մոխիրը վոտքով  
կոխկրտեց գետնի վրա: Վոչ վոր վնչ մի խոսք չարտա-  
սանեց: Ինձ տարան: Ինձ բերին իմ կենդանի դամբա-  
րանը:

Յեթե այս կատ այն յեղբոր քար սրտում այդ սոսկալի  
տարիներին ցանկություն ծագեր մի լուր տալ ինձ գոնեն  
թանկազին կնոջս մասին, կամ գեթ մի խոսքով հիշեյին՝

կենդանի՝ յե նա, թե մեռած, — յես կհամարելի, թե բախտն իսպառ չի թողել ինձ:

Բայց այժմ յես հավատում եմ, վոր արյունալի նշանը ճակատագրական ոլիտի լինի նրանց համար, և վոր նրանց սպասում ե մի անողոք ապագա: Նրանց վերաբերմաբ ու իրենց սերնդի, մինչև վերջին շառավիղը, յես, Ալեքսանդր Մանես, Բաստիլի գժբախտ կալաւարս, 1767 թվականի այս վերջին գիշերը, մահվան անտանելի տագնապի մեջ, կոչ եմ անում այն ժամանակներին, յերբ բոլոր այդպիսի արարքների հատուցումը կգա:



576